ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/25

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Մասնակցությամբ՝
«Մադոյան» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյան, Ա. Պարանյան

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 25.04.2019թ. թիվ 26/26-1/6897-2019 գրությամբ «Մադոյան» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի 12.04.2019թ. թիվ 31-213 գրության հիման վրա, 25.04.2019թ. «Մադոյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն 12.04.2019թ. թիվ 31-213 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/11 ծածկագրով հայտարարած՝ էլեկտրական սարքերի ձեռքբերման մրցույթի շրջանակներում «Մադոյան» ՍՊ ընկերության հայտը մերժվել է Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված հիմքով (որակավորման փաստաթղթեր ընդհանրապես չեն ներկայացվել):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում եմ Ձեր որոշումը՝ «Մադոյան» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:»:

3. <u>«Մադոյան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 30.04.2019թ. գրությամբ դիմել է «Մադոյան» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.04.2019թ. թիվ 26/26-1/6897-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

Ներկայացնելով գրավոր դիրքորոշում՝ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

««Մադոյան» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և 6, 28 չափաբաժինների մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է՝ առաջին տեղ զբաղեցնող մասնակցին 08.04.2019թ. /կցվում է/ առաջարկել ներկայացնելու «ՀՀՌՑ-

ԳՀԱՊՁԲ-19/11» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Ընկերության էլեկտրոնային հասցեից՝ «Մադոյան» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում, այն է 11.04.2019թ. /կցվում է/ Ընկերությանը պատկանող էլեկտրոնային հասցեից՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին է ուղարկել պահանջված որակավորման փաստաթղթերը:

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.04.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.2 կետի համաձայն /կցվում է/՝ գնահատող հանձնաժողովը 02.04.2019թ. թիվ 2 որոշմամբ ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4 ենթակետով առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներից պահանջել է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 05.04.2019թ.ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագիրը/:

Նույն արձանագրության 2.4 կետի համաձայն՝ «Մադոյան» ՍՊԸ-ի կողմից սույն արձանագրության 1.2 կետով պահանջվող փաստաթղթերը չեն ներկայացվել և «Մադոյան» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ համաձայն նույն արձանագրության 3.2 կետի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը, որը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.թիվ 526-Ն որոշմամբհաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ եթնակետը, համաձայն որի՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երե քաշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսվա ծդեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով

սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ոսումնասիրությունից պարզ է դառնում, որ «Մադոյան» ՍՊԸ-ն կատարել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով իր վրա դրված պարտավորությունը, ըստ որի՝ որակավորման փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ համապատասխան ծանուցումը ստանալուց հետո սահմանված 3 աշխատանքային օրվա ընթացքում Ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային հասցեին է ուղարկել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Սակայն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում նաև մի քանի այլ փաստական հանգամանքների վրա, մասնավորապես՝ անհասկանալի է գնահատող հանձնաժողովի 10.04.2019թ. թիվ 3 արձանագրության 1.2 կետը ամբողջությամբ, և այսպես համաձայն վերոնշյալ 1.2 կետի՝ գնահատող հանձնաժողովը 02.04.2019թ. թիվ 2 որոշմամբ ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4 ենթակետով առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներից պահանջել է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 05.04.2019թ. ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագիրը/:

Հայտնում ենք, որ 02.04.2019թ. գնահատող հանձնաժողովի կողմից բոլոր մասնակիցներին ուղարկվել է թիվ 2 արձանագրությունը /կցվում է/, իսկ որակավորման փաստաթղթերի ծանուցումը ուղարկվել է 08.04.2019թ. և այս պարագայում անհասկանալի է դառնում, որ 08.04.2019թ. ծանուցելով մասնակցին որակավորման փաստաթղթերը ներկայացնելու մասին,ինչպես էր մասնակիցը մինչև 05.04.2019թ. ներկայացնելու այդ փաստաթղթերը:

Միևնույն ժամանակ անհասկանալի է նաև թե 08.04.2019թ. ծանուցումից հետո հաշված երեք աշխատանքային օրվա ավարտին չսպասելով՝ ինչու է գնահատող հանձնաժողովը 10.04.2019թ. նիստ կայացրել և նույնիսկ որոշել մերժել «Մադոյան» ՍՊԸ-ի հայտը մինչև 05.04.2019թ. փաստաթղթերը չներկայացնելու հիմքով և դա այն դեպքում երբ որակավորման փաստաթղթեր ներկայացնելու ծանուցումը ուղարկվել է 08.04.2019թ.:

Ցանկանում ենք փաստել,որ այս պարագայում առկա չէ Ընկերության կողմից Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջների խախտում, քանզի նշված ենթակետի

համաձայն՝ գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը, եթե վերջինս սահմանված ժամկետում ընդհանրապես չի ներկայացրել պահանջված փաստաթղթերը, իսկ տվյալ դեպքում առկա է«Մադոյան» ՍՊԸ-ի կողմից համապատասխան փաստաթղթերը սահմանված ժամկետում պատվիրատուի համապատասխան էլ. հասցեին ուղարկելու բոլոր ապացույցները:»:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքներ քննող անձին խնդրել են «Մադոյան» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2019/25 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հայտարարվել է «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

«Մադոյան» ՍՊԸ-ն հայտով ներկայացրած թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմումում, որպես ընկերության էլեկտրոնային փոստի հասցե է նշել nerses@madoyan.am:

Գնահատող հանձնաժողովի 26.03.2019թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ որը շարունակվել է 28.03.2019թ., որոշել է Ընթացակարգի 6-րդ և 28-րդ չափաբաժինների մասով առաջին տեղն զբաղեցնող մասնակից ճանաչել «Մադոյան» ՍՊԸ-ին:

Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է՝ առաջին տեղ զբաղեցնող մասնակցին առաջարկել ներկայացնելու առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրեը /ամբողջական նկարագիրը/:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարի (այսուհետ նաև՝ Քարտուղար) կողմից 02.04.2019թ. hhrc.gnum@tna.am էլեկտրոնային փոստի հասցեից, մի շարք մասնակիցների՝ այդ թվում նաև «Մադոյան» ՍՊԸ-ի nerses@madoyan.am էլեկտրոնային փոստի հասցեի ուղարկվել է թիվ 2 արձանագրությունը:

Քարտուղարի կողմից 08.04.2019թ. վերը նշված էլեկտրոնային փոստի հասցեից Մասնակցի նույն էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է ծանուցում, որով առաջարկվել է ուղարկել որակավորման փաստաթղթերը:

Մասնակիցը 11.04.2019թ. ուղարկել է որակավորման փաստաթղթերը՝ թիվ 6 և 6.1 հավելվածները:

Գնահատող հանձնաժողովի 10.04.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կողմից «Մադոյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է՝ վերջինիս կողմից սահմանված ժամկետում պահանջվող փաստաթղթերը չներկայացնելու հիմքով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.04.2019թ. թիվ 26/26-1/6897-2019 գրությամբ «Մադոյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի՝

1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 43-րդ կետի 4-րդ եթնակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը

հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կարգը հաստատելու» կարգի՝ 16-րդ կետի համաձայն հրավերով նախատեսվում է, որ՝

1) բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ընթացակարգով գնումների կատարման դեպքի, գնահատող հանձնաժողովի քարտուղարը՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ որակավորումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու մասին.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը պահանջվող փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուղարկում է հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին: Քարտուղարը պարտավոր է մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերն ստանալու օրը հաստատել դրանց ստանալու հանգամանքը՝ հրավերում նշված իր էլեկտրոնային փոստից մասնակցի էլեկտրոնային փոստին հավաստում ուղարկելու միջոցով:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի կողմից կողմից հայտարարված «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 6-րդ և 28-րդ չափաբաժինների մասով առաջին տեղն զբաղեցնող մասնակից ճանաչել «Մադոյան» ՍՊԸ-ին:

Քարտուղարի կողմից 02.04.2019թ. hhrc.gnum@tna.am էլեկտրոնային փոստի հասցեից, «Մադոյան» ՍՊԸ-ի nerses@madoyan.am էլեկտրոնային փոստի հասցեի

ուղարկվել է թիվ 2 արձանագրությունը, իսկ 08.04.2019թ.՝ ուղարկվել է ծանուցում, որով առաջարկվել է ուղարկել որակավորման փաստաթղթերը:

Մասնակիցը 11.04.2019թ. ուղարկել է որակավորման փաստաթղթերը՝ թիվ 6 և 6.1 հավելվածները:

Տվյալ դեպքում մեջբերված հոդվածների դրույթների՝ գործի փաստերի հետ համադրման արդյունքում պարզ է դառնում, որ «Մադոյան» ՍՊԸ-ն կատարել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով իր վրա դրված պարտավորությունը, այն է՝ 08.04.2019թ. Քարտուղարի hhrc.gnum@tna.am էլեկտրոնային փոստի հասցեից ստանալով վերը նշված կարգի կետին համապատասխան ծանուցում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում՝ 11.04.2019թ. /3 աշխատանքային օրվա ընթացքում/ Ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային հասցեին է ուղարկել որակավորման փաստաթղթերը՝ թիվ 6 և 6.1 հավելվածները:

Տվյալ դեպքում առկա է «Մադոյան» ՍՊԸ-ի կողմից համապատասխան փաստաթղթերը քարտուղարի համապատասխան էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու ապացույցը, որպիսի պայմաններում այդ հանգամանքը չի կարող համարվել որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, որը նախատեսված է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մադոյան» ՍՊԸ-ն չի խախտել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.04.2019թ. թիվ 26/26-1/6897-2019 գրությամբ «Մադոյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ